

ծովուն կից կար «ձկնատեսներն¹ արքունի» (Փաւս. 19), որոյ բառական կազմութիւնը կ'ըսէ մեզ՝ թէ ինչպէս արշակունի թագաւորը կ'երթային տղայարար զբօսնուլ հոն ձկնորսական տեսարաններով: Եւ այս բոլորին զխաւոր նպատակն էր վատնել անպէտ ժամանակը, եւ քան զայդ աւելի՝ պարարտացնել իրենց սեղանները², ինչպէս տեսանք Փարպեցւոյն կրկին եւ երեքկին վկայութենէն (աստ, 179, 181): Անոնք ունէին նաեւ իրենց յատուկ զբօսավայրերն՝ ուր կը դեգերէն ընդ երկար ընտանեօք հանդերձ: Զոր օրինակ՝ Տարօնոյ Բերդակ գիւղը «տեղիք էին զուարձանարյ՝ բուսօք եւ մրգօք անուշիւր՝ նախնեաց իմոց իշխանաց Մամիկոնէից», կը գրէ նոյն տոհմին մէկ պայազատը ԺԲ դարուն, Զորտուանէլ, ուր եւ ծներ էր զինք իւր մայրը (Հյպ. 397): Հոս ալ անազուարճութիւնը կը կայանայ որկորի վայելից մէջ:

տեւն շահատակելով. եւ անոնց օրինակին կը հետեւէին քահանայք ալ, զորս Շնորհալին կը կշտամբէ (Քնդհ. 28, 43):

1. Նոյն բանն այլուր կը գրէ Փաւստոս «ձկնատեսիցն» (138), համեմատ Աննակոյ չորս նորագիր օրինակաց, որ ուղղելի կը թուի «ձկնատեսիցն»:

2. Ըստ Քսենոփոնի՝ որսորդութիւնն հին Պարսից մէջ համագօր էր զինուորական մարզանաց. բայց մեր քով խոտոր կը համեմատի պատերազմական ոգւոյն հետ, ինչպէս պիտի տեսնենք: